

Սմբատ Խ. Հովհաննիսյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԱՆՆԱԼՆԵՐԻ ԳՊՐՈՑԻ ԱՅԼԱՅՈՒՄԸ. «ՆՈՐ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»*

Մաս առաջին: Հետկառուցաբանական հայեցակարգը և
պատմության «քանակային» կամ «չարային» ըմբռնումը

Մուտք

Աննալների դպրոցի այլացման նոր հեռանկար բացվեց 1968 թվականի «մշակութային արմատական հեղափոխությունից» հետո¹: Մի բան, որը գնահատվեց իբրև «պատմական ջրբաժան», երբ «տվյալ աշխարհ-համակարգի մշակութա-գաղափարաբանական իրողությունները վերջնականորեն փոփոխվեցին մի իրա-դարձությամբ, որն ինքնին համակարգի գործառնության որոշակի երկարատև կառուցվածքային միտումների բյուրեղացումն էր»²:

Արդյունքում՝ տեղի ունեցավ արդիականության մշակութային վերարտադրության գլխավոր մեխանիզմների և կառույցների փոխակերպումը: Այդպիսի արմատական փոխակերպումները, **ժ. Ռևելի** դիպուկ բնորոշմամբ՝ «մասշտաբային խաղեր» (jeux d'échelles) էին³: Ուստի նոր-նոր ձևավորվող **հետարդյունաբերության և հետկառուցաբանության** ազդեցության ներքո Աննալների դպրոցը ենթարկվում է տեսամեթոդական ինքնանորոգման շրջաբեկմանը: Կրկին ի հայտ է գալիս նոր հարացույցների և չափորոշիչների մշակման և կայացման հիմնախնդիրը:

Ընդ որում, կիզակետի փոփոխությունը նշանակում էր ոչ միայն դիտարկվող առարկաների ընդգրկունության (տարածաժամանակային և բովանդակային), այլև հանդեսի ներքին կազմակերպական փոփոխություն: Իրավիճակը էականորեն փոխվեց 1969 թվականից, երբ Երկրորդ սերնդի ներկայացուցիչներ **Ֆ. Բրոդելն** ու **Շ. Մորազեն** լքեցին խմբագրի պաշտոնը՝ այն հանձնելով **Մ. Ֆերրոի**,

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.03.2012:

¹ Տե՛ս **К. А. Агирре Рохас**, Критический подход к истории французских “Анналов”, М., Издательство: Кругъ, 2006, с. 128.

² Տե՛ս **I. Wallerstein**, 1968, Revolution in the world-system Theses and queries, Theory and Society, 4 (1989), p. 431.

³ Տե՛ս **J. Revel**, Micro-analyse et construction du social, in **J. Revel**, ed., Jeux d'échelles. La micro-analyse à l'expérience, Paris, Gallimard-Seuil, 1996, p. 17.

Ժ. լը Գոֆֆի, Է. Լը Ռուա Լադյուրիի (հետագայում նրանց կմիանան **Ա. Բյուր-գերն ու Ժ. Ռևելը**) համակառավարմանը⁴: Նկատենք, որ հանդեսի տնօրինության մեջ բոլոր այդ տեղաշարժերը համագիտական հիմնախնդիրների տեսամեթոդական և գաղափարաբանական «հանդերձավորման» համապատկերում ընթացող խորագույն փոփոխությունների սուկ արտաքին դրսևորումներից էին: Գործընթացն ուղեկցվում էր մի կողմից՝ պատմագիտության **ապամարդկայնացմամբ ու կոտորակմամբ**⁵, մյուս կողմից՝ հիմնադիր-ուսուցիչների հայեցակարգերին նոր բովանդակություն հաղորդելու ճիգով⁶: Համաձայն դրա՝ աննալականների նոր սերունդը խնդիր ուներ նախ և առաջ պատասխանելու դպրոցի այլացման ներքին, իսկ ապա՝ արտաքին մարտահրավերին: Նման պատասխանի դեպքում միայն դպրոցն ի գործ կլիներ ապահովել այլացման նոր հեռանկարը:

Այսու՝ «**կառուցաբանության նահանջի**» հենքի վրա աստիճանաբար ձևավորվում է Աննալների դպրոցի պատմագիտական մի նոր հայեցակարգ, որը ստանում է «**Նոր պատմագիտություն**» (**La Nouvelle Histoire**) անվանումը: Աննալականների Երրորդ սերնդի ներկայացուցիչները ենթադրում էին, որ «Նոր պատմագիտությունը» վերապահված է հույժ կարևոր դերակատարում՝ «փոխակերպել մարդկանց կուլեկտիվ հիշողությունը և ստիպել գիտության ու գիտելիքի համալիրին՝ կայանալու ժամանակի երկար տևողության ծիրում: Ըստ այդմ՝ գիտության մեջ կարևորվում է հասարակության բարեշրջության գաղափարը»⁷: Ընդամին՝ այն, ըստ էության, սկզբնապես **դիքոտոմիկ** կառույց ուներ: Այն է՝ աննալականների այս նոր սերունդը **մի կողմից**՝ փորձում էր հավատարիմ մնալ Լ. Ֆերիի, Մ. Բրոկի և Ֆ. Բրոդելի պատմասիրական ոգուն, **մյուս կողմից**՝ վճռականորեն հրաժարվում էր «համընդգրկուն պատմության» հղացքից: Դա էր պատճառը, որ ելակետային փուլում Աննալների դպրոցը «կորցնում է հետազոտական նպատակների և մեթոդների իր նախկին հստակությունը»⁸: Չնայած դրան՝ այն շուտով կարողանում է հաղթահարել իր առջև ծառայած մարտահրավերները և ինքնահաստատվել համաշխարհային պատմագիտական մտքի փոխակերպվող ծիրում՝ արդի հետազոտողների կողմից գնահատվելով իբրև համաշխարհային պատմագիտության նշանակալի իրադարձություններից մեկը⁹:

4 Չևականորեն Բրոդելը խմբագրակազմի մեջ մնաց մինչև իր մահը՝ 1985 թ.: Գետագայում, անդրադառնալով խմբագրակազմի փոփոխության խնդրին, Ֆ. Բրոդելը նշում էր, որ «Այդ պահից սկսյալ ես դադարեցի զբաղվել «Աննալներով»: Նրանք ինձ համար խորթացան»: Տե՛ս Les 80 ans du «pape» des historiens. Entretien avec Fernand Braudel // L'Histoire, 48 (1982), p. 75-76: 1972 թվականին Ֆ. Բրոդելը թողնում է նաև Կոլեժ դ'Ֆրանսի Արդի քաղաքակրթության Վեցերորդ բաժանմունքի և ամբիոնի ղեկավարումը, պահպանելով միայն Մարդու մասին գիտության տան կառավարչի պաշտոնը: Վեցերորդ բաժանմունքի տնօրենը, որը 1975 թվականին մտել էր համալսարանական հաստատությունների կազմը՝ «Ընկերային գիտությունների հետազոտության բարձրագույն դպրոց» անվամբ, դարձավ **Ժ. Լը Գոֆֆը**: 5 Տե՛ս **Ю. Н. Афанасьев**, Историзм против эклектики: Французская историческая школа «Анналов» в современной буржуазной историографии, М., Мысль, 1980, с.165.

6 Տե՛ս **Fernand Braudel** (1902-1985) // Annales: ESC, 1 (1986), p. 6.

7 **La nouvelle histoire.** // Sous la direction de J. Le Goff et R. Chartier, J. Revel, Paris, 1978, (Les encyclopedies du savoir moderne), p. 236.

8 **P. Burke**, The French Historical Revolution. The Annales School 1929-1989, Stanford: Stanford univ. press, 1990, p. 2.

9 Տե՛ս **La recherche historique en France depuis 1965**, Paris: Éditions du Centre national de la recherche scientifique, 1980; **H. Coutau-Begarie**, Le phenomene Nouvelle Histoire: Strategie et ideologie des nouveaux historiens. Paris: Economica, 1984, և այլք:

1. Հետկառուցաբանական հայեցակարգը և Միշել Ֆուկոն

Աննալների դպրոցի կայացման երրորդ շրջափուլը համընկավ դարաշրջանի այն փոխակերպումներին, որոնք, ինչպես վերը նշեցինք, նշանավորվեցին մշակութային և մտահոգևոր մթնոլորտի արմատական փոփոխություններով: Այս համապատկերում հատկանշական է «համընդգրկուն պատմության» հղացքից հեռանալու, տարանջատվելու գործընթացը¹⁰: Նախ և առաջ նման տարանջատումը դրսևորվում է **հետկառուցաբանության (post-structuralisme)** համապատկերում:

Այսպես, 1960-ական թվականներին ֆրանսիական **կառուցաբանական (structuralisme)** շարժումը փորձում էր միմյանց համադրել **Կ. Մարքսի, Ջ. Ֆրոյդի և Ֆ. դը Մոսյուրի** գաղափարները: Արդյունքում ի հայտ է գալիս կառուցաբանության ճգնաժամը, որն էլ իր հերթին 1970-1980-ական թթ. վերափոխվում է **հետկառուցաբանության**: Այս նոր շարժման խնդիրն է դառնում արդեն ոչ թե կառույցը, այլ համատեքստը, մշակութային տեքստերի վերլուծությունը՝ դրանց ստեղծման և կիրառման կոնկրետ, յուրօրինակ իրավիճակների դիտանկյունից: Ուշագրավ է, որ հետկառուցաբանությունն, ի տարբերություն շատ այլ ուղղությունների, իրեն չի ձևակերպում իբրև ինքնուրույն ուղղություն: Սակայն հետկառուցաբանության համապատկերում մշակվում են մի շարք ընդհանուր հայեցակարգեր, որոնք թույլ են տալիս որոշարկել այն իբրև մշակութային երևույթ և մշակութային տեքստեր հետազոտելու յուրօրինակ մեթոդ, իբրև մշակույթի իմաստավորման առանձին ուղղություն: Հատկանշական են հատկապես հետկառուցաբանության ծավալման երկու ռիթմերը՝ կառույցի մեջ «ոչ կառուցայինի» վերհանում-բացահայտումը և ենթակայական սկզբունքի փոխարեն՝ արտաներթակայական սկզբունքի ակտիվացումը¹¹: Դրանք իրենց հերթին ծավալվում են մի քանի այլ ենթառիթմերով, որոնցից են. 1. **մարդու նկատմամբ վերաբերմունքը**, 2. **մարդկային հանրույթի նկատմամբ վերաբերմունքը**, 3. **տեքստի նկատմամբ վերաբերմունքը**, 4. **նշանի նկատմամբ վերաբերմունքը** և 5. **մետաֆիզիկայի ու գիտության նկատմամբ վերաբերմունքը**:

Ընդհանուր առմամբ՝ հետկառուցաբանության տեսությունն իրենից ներկայացնում է փիլիսոփայական հարաբերապաշտություն (**relativisme**) և սկեպտիցիզմ (**scepticisme**), այն է՝ **իմացաբանական կասկածանք**, որը գիտելիքի բնույթի մասին դրապաշտական պատկերացման հակադրումն է: Այլոքն ասած՝ հետկառուցաբանությունն ի հայտ է գալիս իբրև ամենայն «դրական ճշմարտությունների», դիրքորոշումների և համոզումների նկատմամբ «մեթոդաբանական կասկածանք»:

Եթե նախկինում հետազոտության կենտրոնում ընկած էր ճանաչողության, այն է՝ մտածողության և իրերի աշխարհի միջև հարաբերությունների հիմնախնդիրը, ապա այժմ գործնականում շեշտադրումը դրվում է լեզվի հիմնախնդրի վրա, այդու՝ ապրելով ինքնօրինակ «լեզվաբանական շրջաբեկում» (a linguistic turn): Այլ կերպ ասած՝ «Հետկառուցաբանությունը [...] ենթադրում է շեշտի տեղափո-

10 Ինչպես գիտենք, ցայդ Անալականների պատմագիտական կենտրոնական հարացույցներից էր «համընդգրկուն պատմության» հղացքը, որի հետ լծորդվում էին նրանց հետազոտական մեթոդներն ու մոտեցումները:

11 J. Williams, What is poststructuralism? URL:// <http://www.readysteadybook.com/Article.aspx?page=whatispoststructuralism> (13.02.2012).

խումը իմաստից խաղային գործողության վրա: [...] [Այն] ճեղքում է հաստատուն նշանի և ամբողջական ենթակայի հաշտեցուցիչ միասնությունը»¹²: Ուստի ճանաչողության և իմաստի հարցերը ձեռք են բերում զուտ լեզվական բնույթ: Արդյունքում՝ մետաֆիզիկայի քննադատությունը վերածվում է նրա **տրամատույքի (discours)**, կամ **տրամատույքային գործարկումների (pratiques discursives)** քննադատության:

Հետկառուցաբանության կարևորագույն հղացքներից մեկը դառնում է «**ապակենտրոնացման**» հղացքը: Եթե կառուցաբանության մեջ կենտրոնի գործառույթը կազմակերպումն է, «կառույցների խաղերի» սահմանափակումը, նրա ամբողջականության պահպանումը, ապա հետկառուցաբանության մեջ կենտրոնի դերակատարումը վերիմաստավորվում է: Այն է՝ «Կառույցի դասական իմաստավորման շրջանակում կարելի է տարիմաստորեն (paradoxalement) ասել, որ կենտրոնը կառույցի **մեջ** է և կառույցից **դուրս**» (ընդգծումը՝ Ժ. Դերիդայի)¹³ : Այսու՝ կենտրոնը՝ որպես այդպիսին, հետկառուցաբանների կողմից ժխտվում է:

Ապակենտրոնացման գործընթացն առավել ակնհայտորեն դրսևորվում է մարդու նկատմամբ: Մարդը՝ որպես այդպիսին, դադարում է լինել նշանակալի տարրն աշխարհի: Այստեղ գործ ունենք անհատականության ապասարման (dé-montage) հետ: Այն է՝ «Հետկառուցաբաններն իրենց քննադատության առարկան են դարձնում դեկարտյան ամբողջական ենթակայի «դասական հղացքը» (ենթակա/հեղինակն իբրև գիտակցության սկզբնաղբյուր, իբրև իմաստի և ճշմարտության հեղինակություն): Հաստատագրվում է, որ մարդկային ենթական չի տիրապետում ամբողջական գիտակցության, այլ կառուցակազմված է իբրև լեզու»¹⁴: Այստեղից էլ՝ «տեքստերից կառույցների կերպարանման (modeler)» վերացականությունը, որն էլ իր հերթին հանգեցրել է ճանաչողության շրջանակներից ամենայն ենթակայական-մարդկայինի սղմանը (réduction), այն է՝ ապամարդկայնացմանը (déshumanisation):

Ասվածն առավել հետևողականորեն դրսևորվում է հատկապես **Մ. Ֆուկոյի (1926-1984)** հետկառուցաբանական աշխատություններում:

Ֆրանսիացի իմաստասեր և պատմագետ Միշել Ֆուկոյի ստեղծագործությունն ընդունված է բաժանել երեք հիմնական շրջափուլերի՝ «**գիտելիքի հնէաբանություն**» (1960-ական թթ.), «**իշխանության ծագումնաբանություն**» (1970-ական թթ.) և «**գոյության գեղագիտություն**» (1980-ական թթ.)¹⁵: Ընդհանուր առմամբ, սակայն, Մ. Ֆուկոյի տեքստերը, չնայած իրենց տարաբնույթ բովանդակությանը, մեկ ամբողջական հետազոտական ծրագիր են ներկայացնում: Այսպես՝ «հնէաբանական» շրջափուլից անցումը «ծագումնաբանականին» ուղեկցվում է խորագույն համադրությամբ, այլ ոչ թե խզումով կամ մերժումով՝ «այդ ընթացքում ցույց

12 R. Young, Post-Structuralism: An Introduction; in R. Young (ed.), Untying the text: A post-structuralist reader, London and Boston, Routledge & Kegan Paul, 1981, p. 8.

13 Տե՛ս J. Derrida, *Écriture et la différence*. Paris, Éditions du Seuil, 1967, p. 410.

14 M. Sarup, *An introductory guide to post-structuralism and postmodernism*, New York and London, Harvester Wheatsheaf, 1988, p. 4.

15 Տե՛ս H. C. Автономова, Фуко М. // Современная западная философия: Словарь / Сост.: Малахов В. С., Филагов В. П., М., 1991, с. 361. Նկատենք, որ այս տարբաժանումը միակը չէ: Օրինակ՝ ոմանք այն տարբաժանում են երկու շրջափուլերի՝ կառուցաբանական և հետկառուցաբանական: Տե՛ս V. Leitch, *Deconstructive criticism: An advanced introduction*, New York: Columbia University Press, 1983, p. 143-144; H. M. Cavallari, *Understanding Foucault: Same sanity / other madness*. // *Semiotica*. — Amsterdam, 3/4 (1985), p. 315-346; J. Rajchman, *The Story of Foucault's History*, in Foucault. *Critical Assessments* Vol. II, ed. Barry Smart (London: Routledge, 1994), 363-388; և այլք:

տալով փաստարկումը կազմելու կառուցվածքայնությունը առաջինում և հրաժարումը կառուցվածաբանությունից (թերևս, ավելի շուտ թաքուն, քան բացահայտ) երկրորդում (որը դրանով իսկ հետկառուցաբանական բնույթ ունի)»¹⁶: Ընդհանուր առմամբ՝ Մ. Ֆուկոն հակադրվում էր կառուցվածաբաններին հատկապես երկու կետում. **առաջին**՝ չկան որոշակի հիմնարար կառույցներ, որոնք կկարողանային բացատրել մարդկային գոյության պայմանները, **երկրորդ**՝ անհնար է անցնել տրամասույթների (discours) սահմանները և իրավիճակն առարկայականորեն դիտարկել: Այսու՝ դասական իմաստով Մ. Ֆուկոն երբեք էլ չի եղել կառուցաբանական դպրոցի ներկայացուցիչ: Իր իսկ խոստովանությամբ՝ «Ես բացարձակապես կառուցաբան չեմ: Կառուցաբանությունը վերլուծության պայման է (modalité)»¹⁷:

Ուշագրավ է, որ Մ. Ֆուկոն «Իր առաջին իսկ գրքից քննարկում է հիմնախնդիրներ, որոնք մշտապես իմաստասիրությանն են վերաբերել (ողջախոհություն, անմտություն, և այլն), բայց դա անելով կողմնակի ուղիներով՝ պատմության և սոցիոլոգիայի [միջոցով], նախապատվությունը տալով պատմության մեջ որոշ ընդհատությունների (discontinuité) (փոքրիկ իրադարձությունները շատ բան են փոփոխում), ընդամին՝ այդ ընդհատությամբ բեկանում (rupture) չառաջացնելով»¹⁸: Սակայն, ինչպես նշում են հետազոտողները, Մ. Ֆուկոյի հայեցակարգում ամենակարևոր հիմնախնդիրը մնում էր մարդու և պատմության հիմնախնդիրը: Այսու՝ Մ. Ֆուկոն կառուցաբանական իր յուրօրինակ մեթոդաբանությունը լեզվաբանական եղանակներից և հասկացություններից տեղափոխում է պատմագիտության ոլորտ:

Եվ այսպես՝ սկզբնապես Մ. Ֆուկոյի իմաստասիրական-պատմագիտական հայեցակարգում արմատական նշանակություն ունեն **«ենթակա-ճանաչում-աշխարհ»** համագոյության վերաիմաստավորումը: ԽՆդիրն այն էր, որ ենթակայի իմաստասիրությունն ի վիճակի չէր պատասխանելու արդիականության հիմնախնդիրներին ու մարտահրավերներին: Ըստ այդմ՝ Մ. Ֆուկոն հաստատագրում էր ենթական իբրև պատմականորեն կազմավորվող զանազան տրամասույթների փոխհատումների կիզակետ, որոնց արդյունքում ենթական գրկվում է ինքնուրույնությունից և միասնությունից: Այսու՝ նա այդ կենտրոնական կառույցը բաղդատում է «փորձառնություն-սահմանների (expérience-limite) մասին» և «գիտելիքի ձևավորմամբ ինքն իրեն կերպարանափոխելու մասին» տրամասույթների: Այն է՝ առաջադրում է **«փորձառնություն-սահմանի»** գաղափարը, «որի գործառույթն էր պոկել ենթական ինքն իրենից: [...] Յուրօրինակ ուղղակի **փորձառնություններ**, որոնց գործառույթն է պոկել ինձ ինքս ինձանից և թույլ չտալ ինձ լինել այն, ինչ կամ (ընդգծումը՝ Մ. Ֆուկոյի)»¹⁹:

Այսպիսով, «փորձառնությունն» ըմբռնվում է իբրև ինքն իր նկատմամբ, ճշմարտությունների և իշխանության ձևերի միջև խաղերի դինամիկ փոխհարաբերություն: Ընդհանուր առմամբ՝ «փորձառնությունը» մտահղացված է իբրև տիրապետող կառույց և կերպարանափոխությանը ենթակա ուժ, ինչպես նաև՝ իբրև տեսական հարցումի առարկա և պատմական սահմաններից դուրս տեղաշարժ-

16 **И. П. Ильин**, Постструктурализм. Деконструктивизм. Постмодернизм, Москва: Интрада, 1996, с. 68.

17 **M. Foucault**, Dits et écrits 1954-1988, vol. 2: 1970-1975, Paris, Gallimard, coll. «Quarto», 2001, p. 133 (“Je ne suis absolument pas structuraliste. Le structuralisme n’est qu’une d’analyse”).

18 **M. Blanchot**, Michel Foucault tel que je l’imagine, Paris: Fata Morgana, 1986, p. 13.

19 **M. Foucault**, Dits et écrits 1954-1988, vol. 4: 1980-1988, Paris, Gallimard, coll. «Quarto», 2001, p. 43.

ման նպատակ, «որը ցուցանում է այն աստիճանը, թե որքանով ենք մոտ հանձն առնելու անանուն ենթական և ընդհանուր պատմությունը (général de l'histoire)»²⁰: Հենց դա էլ Մ. Ֆուկոն փորձում է իրացնել իր առաջին աշխատություններում, մասնավորապես՝ մարդկային գիտելիքի նախասկզբնական «շերտերի» հետազոտությունը «գիտելիքի հենաբանության» նախագծում: Նպատակն էր մշակույթի հենաբանական հիմնախնդիրների պարզաբանումը, որոնք նախկինում ավելի շուտ գաղտնաբար կռահվել էին, քան թե բացահայտորեն արտահայտվել: Այստեղից էլ՝ «ասույթի գործողությունն» (l'action d'énoncé) ամբողջությամբ վերականգնելու մեթոդը, որը պետք է առարկայանա «նշանակման էական կառույցներում»: Մ. Ֆուկոն անգամ առաջադրում էր նոր «մարդաբանության ասույթի» (énoncé d'anthropologie) մասին հայեցակարգը, որը պետք է նորովի որոշարկեր իմաստի և նշանի, պատկերի և արտահայտության միջև հարաբերությունները: Այսու՝ արդի մարդու համար սեփական սահմանները հատանցող այդպիսի հնարավորության ինքնօրինակ շրջադիտումը դառնում է պատմության ճանաչողությունը: Այստեղից էլ՝ պատմությունը ենթակա է ոչ թե վերափոխության, այլ վերահիմաստավորման: Եվ անցյալի՝ իբրև մշակութային ժամանակի վերարժևորումը կարևոր է մի կողմից՝ ներկան գնահատելու, ներկայում գործել կարողանալու, մյուս կողմից՝ խելամտորեն գալիքը կառուցելու համար: Իսկ այդ ամենը ենթադրում են մարդուն կանխավ տրված սահմանների զանցանումը՝ բացահայտելով նրանում դեռևս անհայտ հնարավորությունները: Ի հայտ է գալիս պատմության իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունների նորովի հետազոտության հիմնախնդիրը: Ասվածն առավել քան վերաբերում է «պատմության մասնատման» հայեցակարգին:

Ըստ **Միշել Ֆուկոյի**՝ եթե նախկինում պատմաբանները «պատմության ընդհատումի» կամ «մասնատման» հասկացությունից խուսափում էին «պատմության համընդհանրության» տեսության համատեքստում, ուր իրադարձությունները կապակցված էին միմյայն խիստ պատճառահետևանքային կապերով, ապա այժմ «ընդհատության» հղացքն ուղեկցում է վարկածի կազմակերպման, հետազոտության և անգամ՝ արդյունքների որոշարկման ընթացքում²¹: Այն է՝ «Շեշտադրում է պատահականությունները և ոչ թե ընդհանրական սկզբունքները, մակերեսները և ոչ թե խորքերը, բազմությունները և ոչ թե միասնությունը, պակասությունները և ոչ թե հիմնավորումները, տարբերությունները և ոչ թե նմանությունները»²²:

Այսու՝ Մ. Ֆուկոն չի ձգտում ընդհանուր համադրության և նախընտրում է գիտելիքի մասնատումի հաստատութենական և տրամասութային գործարկումը, որպիսիք նա հետազոտում է մեկուսի: Ըստ այդմ՝ տրամասութային գործարկումներն իրականանում են համաձայն սկզբունքների, որոնք բավականին հստակ են

20 M. Foucault, L'Archéologie du savoir, Paris, Gallimard, coll. «Bibliothèque des Sciences humaines», 1969, pp. 26-27. Սկատենք, որ միևնույն ժամանակ թե՛ Ֆ. Սիցշեի, թե՛ Ժ. Բատայի և թե՛ Մ. Բլանշոյի «փորձառնական» հայեցակարգերը արմատապես տարբեր էին ֆեռմենոլոգիական և էկզիստենցիալ ընթանումներից: Այդուամենայնիվ՝ դրանք Մ. Ֆուկոյի համար հանդիսացան այն կարևոր հենակետերը, որոնք հետագայում, իր իսկ խոստովանությամբ, հնարավորություն պիտի տան «պոկվելու ավանդությունից», որի ներսում, դաստիարակվել էր: Այսու՝ «փորձառնության» թեման Մ. Ֆուկոն մշակում է մի կողմից՝ Ֆ. Սիցշեի, Ժ. Բատայի և Մ. Բլանշոյի, մյուս կողմից՝ ֆեռմենոլոգիական և էկզիստենցիալիստական (որոնցից հետագայում վճռականորեն տարազատվում է) հարացույցների համապատկերում:

21 Տե՛ս M. Foucault, L'Archéologie du savoir, pp. 14-15.

22 V. Leitch, Deconstructive criticism: An advanced introduction, New York: Columbia University Press, 1983, p. 143-144.

որոշակի ժամանակի, տարածության և մշակութային կարգավորումների համար: Դա ոչ թե մարդկանց մտքերի վրա դրված արտաքին որոշարկման, այլ «կանոնների խնդիրն է, որոնք լեզվի քերականության նման որոշակի ասույթների թույլ են տալիս (statements) իրականանալ»²³: Այդ մոտեցումը ենթադրում էր հետազոտություններից հեռացնել պատճառական կապերը, որոնք փոխարինվում են **ապարքավապատկականության (démultiplication)** պատճառականությամբ, ըստ այդմ՝ ձեռքագատվելով միակ անհրաժեշտության «նշանի գերությունից»: Կենտրոնին փոխարինում են **կապակցումները (strates)**, բարեշրջության շարժիչներին՝ հեղափոխական ընդհատումները: Պատմաբանի (հնէաբանի) խոսքը պետք է սահմանափակվի նկարագրական առարկայով, շարքերով. նա դառնում է գիտելիքի հնէաբան. «Բայց կարևոր է այն, որ պատմությունը չի դիտարկում իրադարձությունները՝ չորոշարկելով հաջորդականությունները, որոնց մասն են կազմում դրանք»²⁴:

Ուստի Մ. Ֆուկոն պատմության մեջ որոնում է ոչ թե այս կամ այն գաղափարների և պատկերացումների բարեշրջությունը հրնթացս ժամանակի, այլ նրանց կապակցված կառույցները յուրաքանչյուր պատմական շրջափուլում: Այսու՝ նա որոնումներ է ձեռնարկում՝ գտնելու համար «յուրաքանչյուր հնարավոր անհամասեռությունը, պայթյունն ու տարբերությունը»²⁵: Այստեղից էլ՝ հետաքրքրությունը ոչ թե այս կամ այն մակերեսային կարծիքների, ենթադրությունների միջև եղած տարբերությունների նկատմամբ, այլ տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր մտածական կառույցների մակարդակում դրանց խորքային մերձության²⁶: Այլ կերպ ասած՝ «տպավորություն է ստեղծվում, թե նա զբաղված է խորքերի, սկզբունքների և հիմնավորումների որոնումներով, այլ ոչ թե ընդհանուր կարգուկանոնի մեջ անկանոնության առանձին դեպքերի»²⁷:

Այսպիսով՝ հնէաբանի (պատմագետի) համար, ըստ Մ. Ֆուկոյի, մշակույթի մեջ չկա ոչինչ նախապես տրված. ո՛չ գիտությունների առարկաների միջև սահմանները, ո՛չ հասարակական գիտակցության այլ ձևերի հետ գիտությունների հարաբերակցությունները, ո՛չ էլ անգամ այնպիսի առարկաները, ինչպիսիք են «հեղինակ» կամ «ստեղծագործություն» հղացքները, չեն կռահվում ինքնին: Ըստ այդմ՝ նա ձգտում էր դուրս գալ սպրումի համընդհանուր նշանակության այն մակարդակը, որը ծնունդ է տալիս անհատական իրադարձություններին, որոնք էլ իրենց հերթին պայմանավորում են տարբեր պատմական շրջափուլերի առանձնահատկությունները:

Այսու՝ նախկին **գիտակցություն-ճանաչողություն-գիտություն** համագոյության փոխարեն (որը չի կարող խուսափել ենթակայականությունից), Մ. Ֆուկոն առաջադրում է տրամասութային **գործարկում-գիտելիք-գիտություն** համագոյությունը²⁸: Ընդ որում՝ «տրամասութայինը» Մ. Ֆուկոյի մոտ չի նշանակում «ռացիոնալ», «տրամաբանական» կամ «լեզվական» բառի բուն իմաստով: Տրամասությոը համընդհանուր օրենքների և անհատական երևույթների միջանկյալ գոտին է, լեզվի և ճանաչողության հնարավորությունների պայմանների ոլորտը: Տրամասու-

23 C. O'Farrell, Michel Foucault, London: Sage, 2005, p. 79.

24 M. Foucault, L'Ordre du discours, Paris, Gallimard, 1971, pp. 57-58.

25 C. O'Farrell, op.cit., p. 74.

26 M. Walshaw, Working with Foucault in Education, Rotterdam, The Netherlands: Sense Publishers, 2007, p.10.

27 V. Leitch, op.cit., p. 143-144.

28 Տե՛ս M. Foucault, L'Archéologie du savoir, p. 239.

թային գործարկումներն, ըստ Մ. Ֆուկոյի, չեն բացառում սոցիալական գործարկումների այլ տեսակները, ճիշտ հակառակը՝ ենթադրում են դրանք և պահանջում դրանց միջև շղթայակցումների բացահայտումները:

Իսկ տրամասութային գործարկումների և տրամասութային համալիրների հետազոտության ծիրում կարևորվում են այս կամ այն գիտության առարկաների (քանի որ դրանք չեն գտնվում ո՛չ «բառերի» և ո՛չ էլ «իրերի» մեջ) պատմական կազմավորման կոնկրետ սկզբունքները կամ արտահայտությունների կառուցակազմման գործընթացը (քանի որ նրանք չեն պատկանում ո՛չ անդրանցական ենթակային, ո՛չ էլ անհատական ենթակայականության, այլ միայն տրամասությի անդեմ ենթակային): Մ. Ֆուկոն կոնկրետացնում է. «Տրամասութային գործարկումը չի համընկնում գիտական զարգացման հետ, որին նա կարող է տեղ տալ. գիտելիքը, որը նա կազմավորում է, ո՛չ անմշակ ուրվագիծ է, ո՛չ էլ գիտությամբ կազմավորված առտնին կյանքի կողմնակի արդյունք»²⁹:

Ըստ այդմ՝ «գիտելիքի հնէաբանությունը», ի տարբերություն գաղափարների ավանդական պատմության, եղածի սուկ կուտակումը չէր, որը նկարագրում է այս կամ այն կարծիքները՝ չպարզաբանելով դրանց ի հայտ գալու հնարավորությունների պայմանները: Այլ կերպ ասած՝ Մ. Ֆուկոն պատմության հետազոտությունն օժտում է պատմության դասական ըմբռնմանը հակադիր ճանաչողությամբ: Խոսքը ոչ թե պատմական գործընթացի նախատրված միասնության, այլ առանձին պատմական շրջափուլերի անհատական անկրկնելիության մասին է (անկախ նրանց փոքր և աննշան լինելուց): «Գիտելիքի հնէաբանության» խնդիրն է ընդհանուր պատմական միտումները հետազոտելիս որսալ առանձին մշակութային շրջափուլերի առանձնահատկությունները: Ուստի, ըստ Մ. Ֆուկոյի, խնդիրը ոչ թե շրջակա միջավայրի մարդկանց իրենց իսկ կամոք և ընտրությամբ իմաստավորելու, ինչպիսին լինելու մեջ է, այլ՝ թե «ինչպե՞ս, ի՞նչ պայմաններում և ներքին տրամասութային կարգի, ի՞նչ ձևերով կարող է ի հայտ գալ իրն (chose) իբրև ենթակա: Տրամասությի յուրաքանչյուր տեսակի մեջ ի՞նչ տեղ կարող է իրը զբաղեցնել, ի՞նչ գործառնություններ կարող է այն իրականացնել, որպեսզի ենթակային զրկի նախասկզբնական հիմնավորվածությունից»³⁰: Այսու՝ «**հնէաբանությունը**» հանդես է գալիս իբրև ավանդական պատմական կառույցների, իմացությունների, կուտակումային տեսակի պատմական գիտելիքների տարբաժանում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կարգավորող սկզբունք յուրաքանչյուր իմացության մեջ «բառերի» և «իրերի» հարաբերակցությունն է:

Նկատի առնելով այս ամենը՝ Մ. Ֆուկոն հետազոտում է այն պատմական փոփոխվող կառույցները, որոնք որոշարկում են կարծիքների հնարավորությունների, տեսությունների և անգամ գիտության պայմանները՝ յուրաքանչյուր պատմական շրջափուլում, և դրանք անվանում է «**իմացություններ**» (épistémès): Մեկնարկելով մտածողության լեզվական բնույթից և մարդկանց գործունեությունը հանգեցնելով «տրամասութային գործարկումների»՝ Մ. Ֆուկոն յուրաքանչյուր կոնկրետ պատմական դարաշրջանի համար սահմանում է ինքնօրինակ «**իմացություն**»՝ «հիմնախնդրային դաշտ», որը տվյալ ժամանակաշրջանում հասել է «տրամասություններից» տարաբնույթ գիտական կրթանքներ կազմավորող «մշակութային գիտելիքի» մակարդակի: Ըստ այդմ՝ «Իմացության նկարագրությունը

29 M. Foucault, L'Archéologie du savoir, p. 240.
30 Ibid., p. 95.

ներկայացվում է մի քանի կարևոր բնութագրություններով: Այն բացում է անհատ-
նում մի տարածություն, որը երբեք չի կարող փակվել, իր նպատակը չի դնում այն
կանխադրությունների համակարգերի վերակառուցման եզրափակումը, որոնք որո-
շարկում են դարաշրջանի ամբողջ գիտելիքը, այլ ծածկում է անվերջ կապերի
դաշտը: Բացի այդ՝ իմացությունը անշարժ պատկեր չէ, որը, մեկ անգամ հայտն-
վելով, այդպես անսպասելի ստիպված է անհետանալ. իմացությունը երևույթների,
տեղաշարժերի, գուգաղիպությունների անվերջ շարժում ամբողջությունն է, որոնք
հաստատվում և տարրալուծվում են»³¹: Ավելի կոնկրետ՝ իմացությունները հանդի-
սանում են տվյալ ժամանակաշրջանի լեզվական գործարկումների ամբողջությու-
նը: Եվ յուրաքանչյուր իմացության ներսում հիմնարար կարգաբերող սկզբունքը
«բառերի» և «իրերի» փոխհարաբերությունն է³²: Փոխհարաբերությունների վերո-
հիշյալ բնութագրին համապատասխան էլ Մ. Ֆուկոն առանձնացնում է Նոր դա-
րերի եվրոպական մշակույթի երեք «իմացություններ»․ 1. Վերածննդի (XVI դ.),
երբ «բառերն» ու «իրերը» համապատկանում են ըստ նմանության, 2. դասական
ռացիոնալիզմի (XVII - XVIII դդ.), երբ «բառերն» ու «իրերը» համեմատվում են
միմյանց մտածողության միջոցով, 3. արդի (XVIII դարի վերջ - XIX դարի սկիզբ
և ներկա օրեր), երբ «բառերն» ու «իրերը» կապակցվում են միմյանց ավելի բարդ
միջնորդավորված կապերով, ինչպիսիք են աշխատանքը, կյանքը և լեզուն³³:
Այսու՝ «իմացության» ներքո Մ. Ֆուկոն վեր է հանում «կապակցումների ամբող-
ջությունը, որոնք կարող են միավորել տվյալ դարաշրջանի մեջ տրամասութային
գործարկումները, որոնք ներկայացնում են իմացաբանության, գիտությունների և
ցանկացած հնարավոր ձևավորված համակարգի տեղը»³⁴: Այլոքեն ասած՝ «իմա-
ցությունն այն միջոց է, որի համապատասխան յուրաքանչյուր տրամասութային
ֆորմացիա (formations discursives) դառնում է հնարավոր, և իրականացվում է
իմացաբանության, գիտականացման և ֆորմալացման շարժումը»³⁵:

Հատկանշական է, որ Մ. Ֆուկոյի կողմից առաջադրված «իմացության»
հղացքը համընկնում է Աննալների դպրոցի հիմնադիր-ուսուցիչների՝ Լ. Ֆևրի և Մ.
Բյուկի կողմից բազմիցս կիրառվող «մտակեցվածք» (mentalité) հղացքին: Տարբե-
րությունն այն է, որ թե՛ Լ. Ֆևրը և թե՛ Մ. Բյուկը «մտակեցվածք» հղացքին դիմում
էին հոգեբանական դիտանկյունից: Նրանք մտակեցվածքները քննում էին միա-
ժամանակ թե՛ իբրև ըմբռնման (percevoir) կամ դատողություն անելու (raisonner)
եղանակների բանական կառույց (ինչը նրանք անվանում էին «մտահոգևոր գոր-
ծիքակազմ (l'outilage mental)»), թե՛ իբրև տարբաժանված հղացքների համա-
խումբ և թե՛ իբրև զգայականության վիճակ, որը թույլ է տալիս անհատներին հա-
ղորդակցվել նաև իրենց հույզերով: Այլ կերպ ասած՝ կոլեկտիվ մտակեցվածքների
ծավալը նրանց համար ուներ գործառութային բնույթ: Այն անհատների միջև
ստեղծում է մի կլիմա (Մ. Բյուկի խոսքերով՝ «մտահոգևոր մթնոլորտ (atmosphère
mentale)»), հաղորդակցության մի տարածություն, որի ներսում նրանք կարող են
ծավալել իրենց ռազմավարությունները, դրսևորել իրենց կոնֆլիկտները և այլն³⁶:

31 *Ibid.*, p. 250.

32 Ավելի ուշ Մ. Ֆուկոն նկատել է տալիս, որ «բառերն» ու «իրերը» ոչ թե ուղղակի, այլ ավելի շուտ
հեզոնական (իրոնիկ) նշանակություն ունեն:

33 Տե՛ս **Н. С. Автономова**, Мишель Фуко и его книга «Слова и вещи» (вступительная статья), в книге: **М. Фуко**, Слова и вещи. Археология гуманитарных наук. М., «Прогресс», 1997, с. 11.

34 **М. Foucault**, L'Archéologie du savoir, p. 250.

35 *Ibid.*, p. 250.

36 Տե՛ս **A. Burguière**, L'École des Annales: Une histoire intellectuelle. Paris: Odile Jacob, 2006, p. 259.

Իսկ ահա Մ. Ֆուկոյի համար դարաշրջանի «իմացությունը» խթանում է միտքը: Այն միաժամանակ ստեղծում է գիտելիքն ու ճշմարտության պայմանները, աջակցում է անհատներին սոցիալական կյանքը (որի մեջ ներառված են) հասկանալու միջոցներով, ինչպես նաև փոխհամաձայնության կշռադատումներով (reasons):

Նկատենք, սակայն, որ իբրև կառուցվածքային սկզբունք՝ «իմացությունը» մասամբ կրում է ոչ համակարգային բնույթ: Ընդ որում՝ կարևոր չէ, որ այն գործում է իբրև անգիտակցական գործոն (ինչպես գործառութավորված էին դասական կառուցաբանության ոչ բացահայտ կառույցները), այլ այն, որ ձևակերպված լինելով իբրև չափազանց ընդհանուր սկզբունք, չնայած Մ. Ֆուկոյի ջանքերին՝ այդպես էլ չստացավ տրամաբանորեն հիմնավորված սխեմա: Ուստի տրամասույթը հազվադեպության, ներքին կողմի սփռմանն ու կուտակումների առաձևահատուկ ձևերին համապատասխան նկարագրելու համար հարկավոր է դիմել Մ. Ֆուկոյի կողմից առանձնացված «դրականությանը»³⁷: Այդ դրականությունը կազմում է այն, ինչը Մ. Ֆուկոն անվանում է **պատմական ապրիորի (a priori historique)**: Իսկ տրամասութային կազմավորումների մեջ՝ ընդհատականության պատմական ապրիորիի սահմանին, ի հայտ է գալիս «**արխիվի (archive)**» հղացքը: Ըստ Մ. Ֆուկոյի՝ արխիվը «ասույթների կազմավորման և փոխակերպման ընդհանուր համակարգն է», «օրենքն է այն բանի, որը, կարելի է ասել, համակարգն է, որը պայմանավորում է ասույթի հայտնվելն իբրև եզակի դեպք»³⁸: Հարդյունս դրա՝ շուտով «գիտելիքի հնէաբանության» մեջ «իմացությանը» փոխարինելու է գալիս «արխիվի» հասկացությունը: Վ. Լեյչի դիպուկ բնորոշմամբ՝ իմացությունը «մշակույթի դրական անգիտակցականն է, նրա արխիվը»³⁹: Խորքային առումով, սակայն, «նոր հասկացության բովանդակային դիտանկյունը և նրա՝ իբրև վերլուծական սկզբունք ներմուծման նպատակը մնում են նույնը՝ պատմական ժառանգականության գծի խզման փաստի ապացուցումը»⁴⁰:

Վերոհիշյալ «անենթակա» տարածությունների հարաբերակցմամբ Մ. Ֆուկոն բնութագրում է և իր մեթոդը՝ «հնէաբանությունը», կամ, ինչն այդ ժամանակ նրա համար նույնն էր, «ծագումնաբանական (généalogique) վերլուծությունը». 1970-ական թվականներին Մ. Ֆուկոն «հնէաբանական վերլուծություն» և «ծագումնաբանական վերլուծություն» արտահայտությունները կիրառում էր իբրև հոմանիշներ: Սակայն իր ավելի ուշ շրջանի աշխատություններում նա բավականին հետևողականորեն մշակում է և դրանց տարբերությունները: Այսպես՝ նախապես Մ. Ֆուկոյի համար «ծագումնաբանությունը (généalogie) պատմության ձև է, որը պետք է հաշիվ տա այն մասին, ինչ վերաբերում է գիտելիքների, տրամասութների, առարկաների ոլորտների և այլնի որոշարկումներին»⁴¹: Հետագայում ուրվագծվում է այն հեռանկարը, որի համապատկերում «ծագումնաբանություն» հասկացությունը մի կողմից փոխարինում, մյուս կողմից՝ փոխլրացնում է «հնէաբանություն» հղացքին: Ըստ այդմ՝ «հնէաբանությունը» ենթակայի փորձառության ոլորտում ծագած խնդրականացումների ձևերի հետազոտությունն է, իսկ «ծագումնաբանությունը»՝ ինքնին դրանց ձևավորումը, որը մեկնարկում է իրենց

37 M. Foucault, op. cit., .., p. 164.

38 Ibid., pp. 166, 170.

39 V. Leitch, Deconstructive criticism: An advanced introduction, New York: Columbia University Press, 1983, p. 149.

40 И. П. Ильин, Постструктурализм. Деконструктивизм. Постмодернизм, Москва: Интрада, 1996, с. 65.

41 M. Foucault, Dits et écrits 1954-1988, vol. 3: 1976-1979, Paris, Gallimard, coll. «Quarto», 2001, p. 147.

դինամիկայի մեջ գտնվող գործարկումների վերլուծությունից. «Խնդրականացումը ինչ-որ նախագո առարկայի ներկայացումը չէ, ոչ էլ տրամասության միջոցով գոյություն չունեցող առարկայի ստեղծումը: Դա տրամասության կամ ոչ տրամասության գործարկումների ամբողջությունն է, որն այս կամ այն իրը ներմուծում է ճշմարիտ կամ կեղծ խաղի մեջ և մտքի համար կառուցում իբրև առարկա»⁴²:

Այսպիսով՝ «հնէաբանությունը» նկարագրում է ստեղծագործության տվյալ մշակույթի հիմնարար ասույթների, արտահայտությունների գործարկումները, որից հետո իր աշխատանքներն է սկսում ծագումնաբանությունը, որը հետագոտում է արտաքին, ոչ տրամասության պայմանները, որոնք ձևավորել են տրամասության գործարկման տվյալ փոխդասավորությունը: Ծագումնաբանությունը «մեկնարկում է առկա խնդրից, որը գոյություն ունի այժմ, ներկայում»⁴³: Արդյունքում՝ «ծագումնաբանության կառուցակազմումը նրա գիտելիքի նպատակն է, իսկ իբրև միջոց ներկայանում է հնէաբանությունը»⁴⁴:

Եվ այս համապատկերում բոլոր փաստերը, մշակույթի բոլոր բաղկացուցիչներն ու տարրերը, որոնք ներկայացվում են անտրոհելի, ենթարկվում են տրոհման: Ընդ որում՝ այդ ամենը ներգրված են խոսքային կամ «**տրամասության գործարկումների**» համատեքստում: Եվ, ի տարբերություն Հեգելի, Ֆուկոն մարդուն չի վերցնում իբրև տրվածություն⁴⁵: Ընդհակառակը, նրա համար մարդը պարզապես «գաղափարի» գործիք չէ, այլ «իշխանության արդյունք»: Իսկ հումանիտար գիտությունները հայտնվում են պատմության իմաստասիրության փակուղում, որտեղ «մարդը խնդիր էր դարձել ինքն իր համար՝ խոսքերից առաջնահերթ թեմա ընտրելով իր սեփական խոսքը, կեցությանը տված իր հարցը»: Արդյունքում՝ «Մարդու մասին գիտությունը ստիպված էր մշակութային բեմից վոնդել մարդուն»⁴⁶: Այդպես կառուցակազմվում է մտքերի և գործողությունների տարածությունը, որում կան իմացությունները, տրամասության գործարկումները, դիրքավորումները (dispositif), բայց ոչ մարդը:

Ուշագրավն այստեղ այն է, որ այդ ամենը հանգեցնում է հետկառուցաբանության «տեսական հակահումանիզմի» բարդ և հակասական հայեցակարգին, այն է՝ «**ենթակայի մահվան**» (**mort du sujet**) ֆուկոյական հոլացքին: Սակայն ինչպես Ֆ. Նիցշեի մոտ «Աստված մեռած է» արտահայտությունը, այդպես և Մ. Ֆուկոյի կողմից հնչեցված «ենթակայի մահը» չպետք է հասկանալ բառացիորեն: Ավելի շուտ այն ենթադրում էր արևմտաեվրոպական մտքի տիրություն տեղ գտած «ենթակա» կամ «մարդ» հասկացության արմատական շրջաբեկումը «այն իմացության, այն սոցիալական և ճանաչողական կառույցների դիտանկյունից, որում նա գտնվում է, և որն ընդունում է մարդու հենց այդ կերպարը»⁴⁷: Դա մոտավորա-

42 M. Foucault, Le souci de la vérité (entretien avec F. Ewald), Magazine littéraire, Vol. 207 (1984), p. 18. Տես նաև M. Foucault, Le souci de la vérité URL:// <http://libertaire.free.fr/MFoucault231.html> (29.02.2012).

43 M. Foucault, op. cit., p. 20. Տես նաև M. Foucault, Le souci de la vérité URL:// <http://libertaire.free.fr/MFoucault231.html> (29.02.2012).

44 M. Foucault, About the Beginning of the Hermeneutic of the Self // Political Theory, 2 (1993), p. 223..

45 Հեգելը պատմությունը դիտարկում էր «պատճառի» միջոցով իբրև շարժում դեպի «Գաղափարի» իրացումը, աստվածաբանության տրամաբանական իշխանությունը, իբրև «Ոգի»: Նա պատմությունը դիտարկում էր իբրև իմաստասիրական բացարձակ հասկացությունների աշխարհիկ երևակում: Մարդկային գոյություններն, այսու, պատմության առարկաներն են այն աստիճանի, որ նրանք ի հայտ կգան, և դա կլինի պատմական անխուսափելիություն:

46 У. Эко, Отсутствующая структура. Введение в семиологию / Пер. с итал. В. Резник и А. Погоняйло/, ТОО ТК «Петрополис», 1998, с. 366.

47 Н. С. Автономова, указ. соч., сс. 22-23.

պես շարունակությունն էր Ֆ. Նիցշեի կողմից առաջադրված «Աստված մեռած է» արտահայտության՝ արդեն մարդու «պսակագերծման» կամ «գահընկեցության» համապատկերում: «Ենթական» արդեն «մարդը» չէ, այլ ինչ-որ «վարկածային սահմանվածություն», անգամ կադապար, որի ներքո «համաբերվում» են կոնկրետ անհատները: Իսկ այդպիսի փոխակերպության համապատկերում խիստ այլացման է ենթարկվում և պատմագիտության առարկայի մասին պատկերացումը. մարդն այլևս դադարում է լինել նրա կենտրոնական դերակատարն ու կապակցող օղակը: Ըստ այդմ՝ կարտեզիական ենթական արդեն դադարում է «իրական» լինելուց՝ վերածվելով հնարավոր, գործուն կառույցի⁴⁸: Ընդամին՝ Մ. Ֆուկոյի «Բառեր և իրեր» մենագրության մեջ անհատն իր գիտակցությամբ արդեն տեղը զիջել էր իրեն հատուկ «իմացություններով» մշակույթին. «Բոլոր փոփոխությունների մեջ, որոնք շոշափեցին իրերի և դրանց կարգի մասին գիտելիքը, նույնությունների, տարբերությունների, հատկանիշների, համարժեքների, բառերի մասին գիտելիքը, միով բանիվ՝ Նույնի (Même) խորագույն այդ պատմության բոլոր դրվագների մեջ միայն մի շրջանում է, որը սկսվել է կես դար առաջ և, հնարավոր է, շուտով կավարտվի, որ հայտնվել է մարդու կերպը: [...] Եթե այդ դիրքավորումները (dispositions) անհետանան այնպես, ինչպես ի հայտ են եկել, եթե ինչ-որ իրադարձություն, որի հնարավորությունը կարող ենք միայն կանխագգալ՝ չիմանալով առայժմ ո՛չ նրա ձևերը, ո՛չ խոստումը, կտապալի դրանք, ինչպես շրջաբեկվեց XVIII դարի դասական մտածողության ենթահողը, այդժամ, հիրավի, կարող ենք հավաստել, որ մարդը կջնջվի հանց ավագե կերպարանք ծովի ափունքին»⁴⁹:

Ընդհանուր առմամբ՝ «ենթակայի մահը», ինչպես և «հեղինակի», «մարդու մահը» ասույթները կառուցաբանության և հետկառուցաբանության մեջ (Մ. Ֆուկո, Ռ. Բարթ և այլք) նշանակում են «հենց դիմել անդեմ, ապաանհատականացված մոտեցման եղանակներին, երբ պատմական կտավը կարելի է վերլուծել անանուն և «դիրքավորված»՝ չդիմելով ո՛չ անհատական հոգեբանությանը, ո՛չ էլ ընդհանրապես անհատականություններին ու անուններին՝ իբրև պատմության ինքնակառուցված կենտրոնների»⁵⁰: Այնպես է, որ ենթական միշտ «կայացումն» է, բայց երբեք՝ «կայացածը»: Վերջինս նշանակում է «ենթակայի մահը», ինչը և տեղի ունեցավ կարտեզիական «անշարժ» ենթակայի հետ: Ժ. Դելյոզի բնորոշմամբ՝ «ենթակայականության (subjectivity) ամենախորքում գոյություն չունի և ոչ մի «ես», այլ միան եզակի բաղդատություն, ինչ-որ ինքնախառնություն (idiosyncrasy), գաղտնի ծածկագիր...»⁵¹: Այսինքն՝ Մ. Ֆուկոն, հրաժարվելով «Ես»-ի՝ մարդ անհատի կենտրոն լինելու հավատից, առաջարկում է վերանայել ենթակայականությունն իբրև հնարավոր (գործուն, վիրտուալ) տարածություն, որում կարող են ներառվել իմաստների հեռանկարային գծերը: Այս պարագային ուշագրավ է տրամասույթի վերարժևորումը, որը «կյանքը չէ, այն ունի այլ ժամանակ, քան է մերը, նրանում դուք չեք հաշտվի մահվան հետ: Հնարավոր է, որ դուք կհուղարկա-

48 Տե՛ս **А.В. Дьяков**, *Философия пост-структурализма во Франции*. — Нью-Йорк.: Издательство «Северный Крест», 2008, с. 119.

49 **M. Foucault**, *Les Mots et les Choses. Une archéologie des sciences humaines*, Paris, Gallimard, coll. «Bibliothèque des sciences humaines», 1966, p. 398. Ինքնին իմացությունն ըստ այդմ հասկացվում էր իբրև որոշակիորեն կառուցակազմված մշակութային դաշտ:

50 **В. П. Визгин**, *Постструктуралистская методология истории: достижения и пределы // Одиссей. Человек в истории*, 1996, М.: Наука, 1997, с. 44.

51 **G. Deleuze**, *Essays critical and clinical* /translated by Daniel W. Smith and Michael A. Greco/, Minneapolis: University of Minnesota Press, 1977, p. 120.

վորեք Աստծուն այն ողջ ծանրության ներքո, ինչ ասում եք, բայց մի՛ մտածեք, թե ասվածից դուք կկարողանաք ստեղծել մարդուն, ում կհաջողվի գոյություն ունենալ ավելի երկար, քան Նա»⁵²: **Այս համապատկերում «ենթակայի մահը» դրսևորվում է իբրև մեթոդաբանական դիրքորոշում, որը թույլ է տալիս տեսանել հասարակության մեջ մարդու համակեցությունը նոր դիտանկյունից: Դա սոցիալ-մշակութային տարածությունն է՝ հիպերտեքստային հնարավորություններով, ընդ որում՝ «տեքստերի» ենթադրյալ ստեղծողի բացակայությամբ:** Արդյունքում՝ պատմությունը դադարում է լինել մարդաբանական մտքի վերջին պահեստարանը և միևնույն ժամանակ՝ դառնում է «համընդգրկուն պատմության» հակոտնյան: Դա, հիրավի, խզումն էր այն բանից, ինչին ձգտում էին Լ. Ֆերն ու Մ. Բլոկը:

Ամփոփենք: Ընդհանուր առմամբ՝ պատմության հետազոտության հարացուցային գործիքակազմի մեթոդական և իմացաբանական այս բեկումը հարկ է դիտարկել բազմաշերտ հեռանկարում: Դրանում, հարկավ, նկատելի են պատմագիտության համար առատ հնարավորություններ: Այսու՝ Մ. Ֆուկոյի կողմից մշակված պատմագիտական հարացույցը հնարավորություն է տալիս վերլուծելու գիտական տրամասույթների կերպարանափոխության մեխանիզմը: Իսկ այդպիսի դիրքորոշման համապատկերում հնարավոր է դառնում պատմական գործընթացը մեկնաբանելիս խուսափել աստվածաբանական և մետաֆիզիկական մարդակենտրոնությունից: Այլորեն ասած՝ պատմագետին այժմ հետաքրքրում է ոչ այնքան կոնկրետ անձնավորության հետազոտության ուղին, որքան ամբողջական ռազմավարություններ մշակելը և դրանց դինամիկական պատմական ու մշակութային տարածության մեջ որոշարկելը՝ «ապառեղծվածայնացնելով (démystifier) իրականության ընդգրկուն առյուծակը (instance), ինչպես մի համընդգրկունություն, որը հարկ է կրկին վերահաստատել»⁵³: Ահա այս համապատկերում էլ ծավալվում է Աննալների դպրոցի Երրորդ սերնդի գործունեությունը:

2. Պատմության «քանակային» կամ «շարային» ըմբռնումը

Աննալականների **Երրորդ սերնդի** (Ժ. Լը Գոֆ, Է. Լը Ռուա Լադյուրի, Մ. Ֆերրո, Պ. Շոնյու, Ժ. Ռևել, Ռ. Շարպյե, Պ. Դոսս, Ֆ. Ֆյուրե, Պ. Վիլար, Մ. Վոլվել և այլք) գործունեությունը ծավալվեց 1970-ական թթ., երբ հանդեսի խմբագրակազմի մեջ ներգրավվեցին Ժ. Լը Գոֆը, Է. Լը Ռուա Լադյուրին, Մ. Ֆերրոն: Ձևավորվող «Նոր պատմագիտության» ընդլայնվող գիտատիրույթը ներառում էր այդպիսի առնվազն երեք հարթություն՝ 1. «**քանակային**» կամ «**շարային պատմություն**», 2. «**մտակեցվածքների պատմություն**» և 3. «**մարդաբանական պատմություն**»: Ուստի պատահական չէր, որ համանման արդիական կողմնորոշումներով հետազոտական ուղղությունները «Աննալների» դպրոցի ներկայացուցիչների համար էական մեթոդաբանական խթան էին⁵⁴:

Նույն այդ ժամանակներում, ինչպես նշել ենք, սկզբնավորվում է «**համընդգրկուն պատմության**» հղացքի հանդեպ քննադատական մոտեցումը. «Իմ սերնդի

52 M. Foucault, L'Archéologie du savoir, p. 275.

53 M. Foucault, La poissière et nuage, in Perrot (M.), éd., L'Impossible Prison, Recherches sur le système Pénitentiaire au XIXe siècle, Paris, Éd. du Seuil, coll. «L'Univers historique», 1980, p. 34. Տե՛ս նաև Michel Foucault, La poissière et le nuage, URL://<http://libertaire.free.fr/MFoucault301.html> (29.02.2012).

54 Տե՛ս D. François, L'histoire en miettes. Des Annales à la “nouvelle histoire”, La Découvert, Pariss, 2005, p. 180.

պատմաբանները,- գրում է **Ա. Բեզանսոնը**, - գատվում են պատմության համընդգրկունության պատրանքներից... Նրանք հասկացան, որ եթե այդ համընդգրկունությունը տեղ ունի, ապա միայն իրենց երևակայության մեջ: Այդ ճշմարտության դիտարկումը թույլ տվեց ձերբազատվել համընդգրկուն պատմության մտապատրանքից»⁵⁵: Այսինքն՝ Երրորդ սերնդի ներկայացուցիչները բրոդեյան «համընդգրկուն պատմության» հղացքը սկսեցին կերպափոխել գիտական տարասեռ մոտեցումների համադրմամբ: Դրանով հաղթահարվում էր պատմական երևույթների իմաստավորման ենթադրվող միագիծ մոտեցումը: Արդյունքում՝ այլացման է ենթարկվում և ուսուցիչ-աշակերտ կառույցը, ինչը «վերջ է դնում «magister dixit»⁵⁶ նախկին դրույթին և որոնումների համար բացում ընդլայն տարածություն»⁵⁷: Աննալների նոր խմբագրակազմն այդ կապակցությամբ նշում է. «Նա (Բրոդելը -Ս.Հ.) ուներ մարդու մասին գիտությունների ձեռքբերումները միասնացնելու **համընդգրկուն պատմության** նախագիծ: Մենք զբաղվեցինք առավելաբար տեղական (local) ծրագրերով: Հույս ունեինք սևեռուն ուշադրություն դարձնել հետազոտական մեթոդներին և ճշտորեն որոշարկել տարասեռ կրթանքների համադրման կարևորությունը»⁵⁸: Պ. Ռիկերի դիպուկ դիտարկմամբ՝ «Տնտեսագետների քանակային պատմությունը ճշգրիտ գիտությունների զոհասեղանին էր բերում հենց երկար տևողությունը»⁵⁹:

Այնհայտ է, որ «համընդգրկուն պատմության» հղացքը, ապրելով իր զարգացման բեկումնային շրջափուլը, նոր միջկրթանքային կապեր է որոնում սոցիալական այլ գիտությունների հետ: Վերանայման է ենթարկվում ինքնին «**պատմական իրականություն**» հղացքը, իսկ դրա հետ մեկտեղ՝ պատմագետի ինքնությունը, նրա արհեստավարժությունը, սկզբնաղբյուրի հավաստիության չափորոշիչները, պատմագիտական ճանաչողության հանդեպ հավատը և «առարկայական ճշմարտության» ձգտումը. պատմագետն այլևս «չի բախում համընդգրկուն պատմության դրախտի դռները, այլ իջնում է այնտեղից և շրջում արդեն բանականորեն հիմնված կառույցների շուրջ»⁶⁰: Այսու՝ ստվերվում է էկզիստենցիալ «դեղատոմսերի» մատնանշած մարդկային ազատության անհատական փրկության հիմնախնդիրը, որն ուղեկցվում է ներքին ուժերի ծայրահեղ լարվածությամբ և իռացիոնալ գործունեությամբ:

Վերողիտարկյալ կողմնորոշիչների փոխակերպումն իր հերթին, երկրորդ պլան մղելով աշխարհագրությունը, տնտեսագիտությունը և սոցիոլոգիան, առաջին պլան է բերում մարդաբանությունը, իմաստասիրությունը և սոցիալական հոգեբանությունը⁶¹: Այսու՝ պատմական գիտելիքի դաշտի բեկորայնացումը տեղիք է տալիս անթիվ պատմագիտական ուղղությունների կազմավորմանը: **Ֆ. Ռ. Անկերամիի** խոսքերով՝ «Պատմությունն այլևս մեր կյանքի տարբեր շրջափուլերում մեզ հետ կատարվածի վերակառուցումը չէ, այլ կատարվածի մասին հիշո-

55 A. Besançon, Histoire et expérience de moi, Paris, 1971, p. 71.
 56 Magister dixit – լատ. ուսուցիչ:
 57 **Ագիրե Քոսե** К. А., Критический подход к истории французских “Анналов”, М., Издательство: Кругъ Год издания, 2006, с. 130.
 58 **Fernand Braudel** (1902-1985) // Annales:ESC, 1, (1986), p. 6.
 59 **Պ. Րիկեր**, Время и рассказ, т. 1, Интрига и исторический рассказ / Пер. Т. В. Славко. — М.; СПб.: Культурная инициатива: Университетская книга, 2000, с. 126.
 60 **М. de Certeau**, Une epistemologie de transition: Paul Veyne, Annales ESC 6 (1972), p. 24.
 61 **Տե՛ս Ագիրե Քոսե** К. А., Критический подход к истории, с. 132.

դրոյթան հետ շարունակական խաղը»⁶²: Միով բանիվ՝ լայն շրջանառութեան մեջ են դրվում «քանակային» (quantitative) կամ «շարային» (sérialle) պատմութեան հղացքները:

Այսպէս՝ 1960-ական թթ. սկզբին արդեն ամերիկեան տնտեսագետների կողմից մշակվում է «քանակային» տեսությունը, որին այլևս չէր բավարարում տնտեսութեան A շրջափուլից B շրջափուլ անցումը գների տատանումներով բացատրելու նախկին մոտեցումը⁶³: Նշանակություն ձեռք բերած «քանակային» տեսությունը աներկբա ազդեցություն է թողնում պատմագիտութեան վրա: Հատկապէս, երբ նույն այդ ժամանակներում հասանելի են դառնում և լայն կիրառում են ստանում էլեկտրոնային հաշվիչ մեքենաները (համակարգիչները): Իսկ դրանց միջոցով հնարավոր էր դառնում նաև պատմութեան հետազոտութեան իրականացումը, որքանով պատմաբանները գործ ունեին թվային-քանակային որոշ հաշվարկների հետ (օրինակ՝ ժողովրդագրական, տնտեսական աճի և այլն)⁶⁴:

Այսու՝ «քանակային» տեսութեան մեթոդների հիման վրա ձևավորվում է ամերիկեան «**Նոր տնտեսական պատմութեան**» (New Economic History) կամ «**կլիոմետրիկայի**»⁶⁵ պատմագիտական ուղղությունը: Վերջինս մեկնարկում էր այն թեզից, ըստ որի՝ մարդկային գործունեութեան որոշ ոլորտներ հնարավոր է հասկանալ միայն որպէս համակարգեր (որոնցում ներառված են նրանք), և որոնց կապերը ենթակա են քանակային վերլուծութեան. եթէ փոփոխականներից որևէ մեկի մեծությունը փոփոխվում է, կարելի է հաշվարկել, թէ դա ինչ ազդեցություն կարող է ունենալ ողջ համակարգի վրա: Ուստի «կլիոմետրիկայի» հիմնարար սկզբնաղբյուրն է դառնում «էկոնոմետրիկան», որն արդի տնտեսութեան վերլուծութեան և ապագայում նրա զարգացման կանխատեսման մեթոդիկան է՝ մշակված վիճակագիրների կողմից⁶⁶:

Ամերիկեան պատմագիտական այս ուղղությունն իր լայն արձագանքը գտավ նաև Ֆրանսիայում, մասնավորապէս Աննալականների Երրորդ սերնդի ներկայացուցիչների՝ Լը Ռուա Լադյուրիի, Ժ. Լը Գոֆի, Պ. Շոնյուի, Ֆ. Ֆյուրեի և այլոց մոտ: Աննալական պատմագետների մոտ նկատվում է ճշգրիտ գիտությունների ձեռքբերումները պատմագիտութեան տիրույթ ներբերելու հակումը: Հետազոտական նախապատվութեան աստիճանաբար թեքվում է դեպի համակարգերի գործառնում, այլ ոչ թէ դրանց փոփոխություններ, ընդ որում՝ ուշադրութեան կենտրոնում պահելով հանգամանքների, հավասարակշռությունների, կառույցների պատմությունը: Արդյունքում՝ մարդկութեան պատմութեան մասին պատկերացումներից հեռացվում է բարեշրջութեան հասկացությունը: Այն է՝ «Տարբեր դարաշրջանները չեն դիտվում իբրև հասարակությունների, քաղաքակրթությունների հաջորդական, առաջադիմական շրջափուլեր, իսկ զանազան ժամանակային ռիթմերը հանդես չեն գալիս իբրև միագիծ ժամանակի բազմակերպ և բովանդա-

62 Ankersmit F., Historiography and Postmodernism // History and Theory, Vol. 28. 2 (1989), p. 145.

63 Այս ժամանակներում հատկանշական է Ու. Ռոսթոնի «Ոչ կոմունիստական Մանիֆեստի» և տնտեսական աճի տեսությունը: Տե՛ս W. Rostow, The Stages of Growth, A non-communist Manifest, Cambridge, 1960.

64 Տե՛ս В. М. Далтин, Историки Франции XIX-XX веков, М., Изд.: «Наука», 1981. с. 227.

65 Կլիոմետրիկա (Cliometric) - եզր, որը մտահղացել են Ջ.Հյուզենսն (J.Hughes) ու Ս.Ռեյթըրը (S.Reiter): Այն որպէս գիտաուղղություն ծագում է 1958 թ. Ա. Կոնրադի (Alfred Conrad) և Ջ. Մեյերի (John Meyer) «Մինչպատերազմական Հարավի ստրկատիրական տնտեսությունները» հոդվածի հրատարակմամբ: Հայերենով պայմանականորեն կարելի է թարգմանել «պատմաչափում»:

66 Տե՛ս Д. Тощ, Стремление к истине. Как овладеть мастерством историка, М., Изд.: «Весь мир», 2000. с. 233.

կությամբ որոշակի տարատեսակություններ»⁶⁷: Աննալական պատմագետներից ոմանք իրենց գիտակրթանքը հաճախ անվանում են «լաբորատորիաներ», որտեղ իրենքացս հետազոտության՝ կարևոր նշանակություն ունեն գիտականության հավակնող քանակային մոտեցումների կիրառումները:

Այս ժամանակաշրջանում (1960-ական թթ.) սոցիալական պատմության վերաբերյալ ֆրանսիացի պատմագետների հետազոտությունների զգալի մասը գրվում է քանակային պատմության ժանրով: Պատմագիտական այս նոր ռիթմը Լը Ռուա Լադյուրին անվանեց «պատմության մեջ քանակային հեղափոխություն»⁶⁸, հարդյունս որի՝ «բոլորովին փոխվում է [...] պատմաբանի արհեստը»⁶⁹: Ընդհանուր առմամբ «քանակային պատմության» նոր կերպը պայմանավորված էր նախ և առաջ տնտեսական աճի պատմականացմամբ. «Եթե առաջին շրջափուլի տնտեսական պատմությունը գլխավորապես համակցային դինամիկայի (dynamique), ճգնաժամերի պատմությունն էր, ապա նոր տնտեսագետների քանակային պատմությունը նախ և առաջ «թռիչքի» (take off), աճի և այդ աճի զանազան տեսակների պատմությունն է»⁷⁰: Համակարգիչների կիրառելիության շնորհիվ առաջադրվում են պատմական ժամանակի ըմբռնման նոր մոտեցումներ: Մինևույն ժամանակ «Նոր քանակային տնտեսական պատմությունը չծնվեց համակարգիչների հետ, բայց այդ հրաշալի գործիքի շնորհիվ էականորեն դյուրինացավ մեր հնարավորությունների ընդլայնումը: Համակարգիչը կոչված է նպաստելու ոչ միայն տնտեսական պատմության առաջընթացին, այլև նրա մեթոդների նորացմանը»⁷¹: Քանակային պատմությունը ստեղծվում է փաստերի հնարավոր հաջորդական տեղադրման արդյունքում՝ իբրև համասեռ միակցություն:

Պատմության տեղայնացումը պատճառ դարձավ, ինչպես վերև ասացինք, նրա **ապամարդկայնացմանը** (dehumanisation): Կրկին ի հայտ էր գալիս փաստերի մասնատման և վերարժևորման հիմնախնդիրը: Արդյունքում՝ պատմության **կոտորակումն ու քանակայնացումը**: Պատմական առանձին իրադարձություններն ու դրվագները, կորցնելով իրենց առանձնահատկությունները, վերածվեցին **հաջորդական շարքերի (sérielles)**⁷²: Աննալականներից **Ֆ. Ֆյուրեն**, ընկնելով ծայրահեղությունների մեջ, անգամ առաջարկում էր վերջ տալ պատմական անցյալի բազմակողմանի վերարտադրման ձգտումներին⁷³: Ըստ նրա՝ «քանակային պատմության» շնորհիվ հնարավոր է հանգել «Հավաստի արդյունքների, տեղայնացված (localisé) երևույթի ավելի լավ նկարագրությանը»⁷⁴: Իսկ **Է. Լը Ռուա Լադյուրին**, ֆրանսիական պատմագրություն ներմուծելով ամերիկյան մեթոդները, կարծում էր, թե պատմագետի ճակատագիրն է «անընդհատ ու անդադար

67 Ю. Н. Афанасьев, Ведущее направление французской историографии // Современная зарубежная немарксистская историография: Критич. анализ / Отв. ред. В.Л. Мальков. М., Изд.: "Наука", 1989, сс. 155-156.

68 E. Le Roy Ladurie, La revolution quantitative en histoire. - In E. Le Roy Ladurie, Le Territoire de l'historien, Vol. 1, Paris, Éditions Gallimard, 1973, p. 18.

69 E. Le Roy Ladurie, La revolution quantitative en histoire, p. 15.

70 P. Chaunu, L'économie: Dépassement et prospective, In: J. Le Goff et P.Nora (eds.), Faire de l'histoire, 3 vols, vol 2, Paris: Éditions Gallimard, 1974, p. 62.

71 P. Chaunu, op. cit., p. 62.

72 St'u P. Chaunu, Un nouveau champ pour l'histoire sérielle: le quantitatif au troisieme niveau, in: *Mélanges en l'honneur de Fernand Braudel*, Tome II: «Méthodologie de l'Histoire et des sciences humaines», Toulouse, Privat, 1973, p. 106.

73 St'u F. Furet, L'Atelier de l'Histoire, Paris, Éditions Gallimard, 1982, p. 172.

74 F. Furet, L'histoire quantitative et la construction du fait historique, Annales ESC, 1 (1971), p. 63-75.

հաշվել ու հաշվել» և հաշվումների «շնորհիվ է, որ գոյություն ունի պատմությունը, որը քանակային է»⁷⁵: Մակայն պատմագետին տրված չէ ամեն ինչ հաշվել ու չափաբերման ենթարկել: Ուստի նա ստիպված է նաև պատմության հետազոտության տիրույթը հնարավորինս նեղացնել՝ հավասարումների մեջ զետեղելու համար⁷⁶: Ֆ. Ֆյուրեի ձևակերպմամբ՝ «Արդի պատմագետը դադարել է լինել «ձեռաց վարպետ», ով իր հետազոտության առարկայի՝ պատմության անորոշության և ունիվերսալության բարձունքներից ձեռք էր զարկում ամեն ինչի մասին դատելուն: Նա դադարել է պատմել այն մասին, ինչ եղել է, այն է՝ ինչը նա համարում է իր պատմությանը, իր ճաշակին կամ էլ իր տեսությանը համապատասխան: Այժմ նա, ինչպես և այլ հումանիտար գիտությունների իր կոլեգաները, պետք է ասի, թե ի՞նչ է հատկապես փնտրում, ի՞նչ նյութեր են տվյալ խնդրին վերաբերում: Նա պետք է հստակորեն ձևակերպի իր վարկածները, ստացված արդյունքները, մեթոդներն ու սպացույցները, ինչպես նաև իր կասկածները»⁷⁷: Իսկ հետազոտական տիրույթ քանակային մեթոդների ներմուծմամբ մեծ ուշադրություն էր դարձվում դիտարկվող խնդրի հատկանիշների և դրանց զարգացումների ու միտումների միջև հնարավոր կապերի (գծային և ոչ գծային) համադրություններին:

Այս համապատկերում է. Լը Ռուա Լադյուրին ավելի հետևողականորեն էր մերժում «իրադարձային պատմության» հղացքը. «Արդի պատմագիտությունը, որը ձգտում է լինել քանակային (quantitatif), կառուցվածքային, ստիպված է ... սպանել, որպեսզի ապրի. արդեն տասնամյակներ առաջ նա իրադարձային պատմությունն ու ատոմականացված կենսագրությունը դատապարտել էր գրեթե լիովին ոչնչացման: Կլիոն այժմ շուտ է գալիս իրադարձությունների չափազանց պարզունակ և չափազանց թեթև այդ երկար շարանից, որոնցով հրճվում էին հին տեսակի պատմագետները: Նա կողմնորոշվում է դեպի կառույցների հետազոտությունը [...], տվյալների հավաքումը, որոնք կարող են ծառայել շարային կամ քանակային հետազոտությանը»⁷⁸: Ընդհանուր առմամբ՝ Է. Լը Ռուա Լադյուրիի կողմից առաջադրված մեթոդը առանձին գործոնների բարդ խճանկար է, որում ոչ մի գործոն (կլիմա, համաճարակ, պատերազմ, վիճակագրություն, ժողովրդագրություն և այլն) վճռական նշանակություն չունի: Իսկ պատմության «քանակային» հետազոտության եղանակով փորձում է հնարավորինս հաղթահարել պատմության մոնիստական հայեցակարգը. «Միսալ կլիներ հասնել ծայրահեղության և ամեն ինչ հանգեցնել մեկ պատճառի [...]: Մոնիզմը միշտ էլ վտանգավոր է»⁷⁹:

Եվ պատահական չէ, որ հաջորդ քայլը պետք է լիներ «անշարժ պատմության» հղացքի առաջադրումը⁸⁰: Այն, ըստ է. Լը Ռուա Լադյուրիի, փոփոխության միջոցով պատմության մշտապես ինքնավերարտադրվող անփոփոխությունն է: Այս առումով է. Լը Ռուա Լադյուրիի հղացքը ինչ-որ իմաստով Ֆ. Բրոդելի «երկար տևողության» հղացքին տալիս էր տրամաբանական ավարտունություն՝ հաստատագրելով գրեթե բացարձակ անշարժություն, անգամ ամենաչնչին փոփոխու-

75 E. Le Roy Ladurie, *La révolution quantitative en histoire*, p. 20.

76 Տե՛ս Ch. Delacroix, F. Dosse, P. Garcia, *Les courants historiques en France (19^e-20^e siècle)*, Paris, Armand Colin, 2005, p. 257.

77 F. Furet, *Sur quelques problèmes posés par le développement de l'histoire quantitative*, in *Information sur les sciences sociales*, 7 (1968), p. 71.

78 E. Le Roy Ladurie, *Le Territoire de l'historien*, Vol. 1, Paris, Gallimard, 1973, p. 165.

79 E. Le Roy Ladurie, *Histoire du climat depuis l'an mil*, Paris, Flammarion, 1967, p. 289.

80 Տե՛ս E. Le Roy Ladurie, *L'histoire immobile // Annales: Economies, Sociétés, Civilisations*, 3 (1974), pp.673–692.

յունների բացակայություն, որոնցով բնութագրվում էր **longue durée**-ն: Դժվար չէ նկատել, որ պատմական ժամանակի նոր տեսակը է. Լը Ռուա Լադյուրիի մոտ ձևավորվում է դինամիկ ժամանակի և միանգամայն դրամատիկ իրադարձությունների (պատերազմներ, համաճարակներ և այլն) համադրմամբ, որոնց նշանակությունը գործնականում անհետանում է երկար տևողության միջակայքում դիտարկելիս:

Գիտանկյան նման փոփոխությունը, որի ներքո դիտարկվում է մարդկության պատմությունը, հեռանում է մարդու հիմնախնդրից: Այն է՝ պատմության քանակային դիտարկման տրամաբանությունն ի վերջո կարող է հանգեցնել «առանց մարդկանց պատմության»:⁸¹ Դա մասնավորապես պայմանավորված էր պատմագիտության աստիճանական անցմամբ՝ վիճակագրությանը, ցուցիչներին և գրաֆիկական պատկերավորմանը: Ավելին՝ պատմության վրա գնալով ավելի ու ավելի տիրապետող էին դառնում զուտ տնտեսագիտական հետազոտությունների տեխնիկական մեթոդաբանությունն ու մոդելավորումը: Արդյունքում՝ Ա. Սորբուլի բնորոշմամբ՝ «Պատմությունը ապամարդկայանում է, դրա հետ մեկտեղ այն կորցնում է իր հոգին»⁸¹: Իսկ դա հակասում է դպրոցի հիմնարար գաղափարին՝ «մարդակենտրոնությանը»: Սկսած նրա հիմնադիր ուսուցիչներից՝ պատմության կենտրոնատեղին մարդն էր: Սակայն ճշմարտության դեմ չնեղանչելու համար ասենք, որ Երրորդ սերնդի աննալականները «բողոքյան սերնդից» են ժառանգել մարդկանցից անկախ «դինամիկ կառույցների» հայեցակարգը: Այն մեկնարկում է «պատմությունն առանց մարդու» հղացքից. «մարդը սոսկ դերակատար է, որը կատարում է իր դերը՝ չտեսնելով սցենարը» (Ֆ. Բրոդել): Արդյունքում՝ աննալականների Երրորդ սերնդի մոտ ամրագրվում է այն համոզմունքը, համաձայն որի՝ պատմությունն ընդհանրապես կարելի է գրել «**առանց մարդկանց**»: Մասնավորապես է. Լը Ռուա Լադյուրին առաջարկում է կատարել միայն կոնկրետ հետազոտություններ, որոնց առարկան մարդը չէ՝ ո՛չ կենտրոնում, ո՛չ էլ ծայրամասերում⁸²: Ավելի կոնկրետ՝ ստեղծել մի պատմություն, «որտեղ մարդիկ ապրում են, բայց չեն իշխում»⁸³: Նա ձևակերպում է իր ծայրահեղորեն միակողմանի բանաձևը. «Վաղվա պատմագետը պետք է լինի ծրագրավորող կամ էլ գոյություն չպետք է ունենա»⁸⁴: Ընդհանուր առմամբ՝ «քանակային» պատմության խոցելի կողմը դարձավ «պատմություն առանց մարդկանց» հղացքը, քանի որ մեծ տարածում գտած ժողովրդագրական, վիճակագրական և բազմաթիվ համանման մեթոդների կիրառությունն իրականում պատմության մեկնաբանության միայն մեկ դիտանկյունն էր: Այնինչ պատմությունից կամ հետազոտություններից բացառելով մարդուն՝ այն ավելի միակողմանի էր դառնում:

Աննալականների Երրորդ սերնդի մեկ այլ ներկայացուցիչ՝ **Պ. Շոնյուն (1923-2009)**, «քանակային պատմություն» եզրի փոխարեն նախընտրում էր «**շարային պատմություն**» (**histoire sérielle**) եզրը՝ գտնելով, որ «իրադարձությունները» պետք է դիտարկել միայն «շարայնության» մեջ, որը «փնտրում է կրկնվող

81 A. Soboul, Problèmes théoriques de l'histoire de la Révolution française, in Aujourd'hui, l'histoire - Enquete de la Nouvelle Critique - (Sources et méthodes - Problèmes théoriques et champs historiques - Histoire économique et sciences sociales - Histoire sociale et histoire des mentalités - Problèmes de la Révolution française), p. 263.

82 E. Le Roy Ladurie La révolution quantitative en histoire, p.13.

83 E. Le Roy Ladurie, L'histoire sans les hommes: Le climat, nouveau domaine de Clio, In E. Le Roy Ladurie, Le Territoire de l'historien, Vol. 1, Paris, Gallimard, 1973, p. 415.

84 Ibidem.

փաստերը, ուշադիր է փաստերի հաջորդականության հանդեպ, որը համառորեն և պարբերաբար վտարում է կոպիտ ոչ վիճակագրական նյութերը»⁸⁵: Ընդ որում՝ «քանակային պատմությունն ու շարային պատմությունը երկու եզրեր են, որոնք բացարձակապես համարժեք չեն»⁸⁶:

«Քանակային» և «շարային» պատմությունների տարբերությունների վերաբերյալ ավելի մեղմ է արտահայտվում Ֆ. Ֆյուրեն՝ նշելով, որ «Քանակային պատմությունն ու շարային պատմությունը միաժամանակ և՛ կապված են, և՛ տարբեր: Բայց դրանք համատեղ ունեն ինչ-որ տարրական բան, այն է՝ հավանական վերլուծությունից կախված պատմական տվյալների կազմակերպումը»⁸⁷: Հարկավ, սա չի նշանակում, թե շարային պատմությունը մերժում է հաշվառումներն ու չափագրումները: Ավելին՝ այն ենթարկվում է մաթեմատիկական մշակման, իսկ առանց մաթեմատիկական գործողությունների «չկա գիտական գիտելիք»⁸⁸: Այսու՝ իբրև շարային պատմություն՝ «կարելի է բնորոշել այն մոտեցումը, որը նախատեսում է միատեսակ տվյալների վիճակագրական շարքերի վերականգնումը, որոնք կրկնվում են մեծ ժամանակային տևողության ընթացքում և համեմատվում որոշակի, կանոնավոր դադարների միջոցով»⁸⁹ : Այդ առումով «շարային պատմությունը վճռական առավելություն է, գիտական դիտանկյուն, երբ դրապաշտական անընթացի «իրադարձություն»-պատմությանը փոխարինում է տվյալների կանոնավոր կրկնություններով»⁹⁰: Դրա հետևանքով՝ պատմությունը մասնատվում է ըստ **շերտագրումների (stratigraphiques)**, որոնք միմյանցից հարաբերականորեն անկախ են: Եվ պատմության յուրաքանչյուր շրջափուլ, յուրաքանչյուր հանրույթ հիմնվում է նախկինում կրկնվող գործընթացների վրա: Ուստի պատմատիկոսների շարայնացումը նպատակ ունի հետազոտական նյութի յուրաքանչյուր միավորին (իրադարձություն, դեպք, անցք) տալու անկախություն՝ այլ միավորների հետ փոխհարաբերություններում:

Ընդհանուր առմամբ՝ շարային պատմությունը հնարավոր է դառնում համակցությունների և կառույցների համահարաբերակցմամբ: Շնորհիվ դրա՝ պատմական ժամանակի բոլոր շերտերը աստիճանաբար վերածնակերպման են ենթարկվում «շարային» հիմքի վրա: Այս համապատկերում համակցությունը ենթադրում է անցում տնտեսական պատմությունից սոցիալական պատմության, իսկ ապա՝ համընդհանուր պատմության տիրույթ: Այսու՝ այն մի յուրօրինակ մեթոդ է, որը «միմյանց է միավորում առանձին շարքերի համահարաբերակցությունների առավելագույն հնարավոր քանակը»⁹¹: Իսկ կառույցի հասկացությունը քննարկվում է մի կողմից՝ վիճակագրական, մյուս կողմից՝ դինամիկ դիտանկյուններից: Վիճակագրական դիտանկյունից կառույցը ենթադրում է տվյալ ամբողջի հարաբերությունների ներդաշնակություն, իսկ դինամիկ դիտանկյունից՝ հաստատուն կայունություն, ինչ-որ որոշակիություն, որը «հնարավոր է համահարաբերակցել բազմաթիվ փոփոխությունների փոխմիահյուսմանը, որոնցից յուրաքանչյուրը

85 P. Chaunu, Un nouveau champ ..., p. 106.

86 P. Chaunu, Les dépassements de l'histoire quantitative: retrospective et perspective In: Mélanges de la Casa de Velázquez, Tome 8, 1972. p. 647.

87 F. Furet, op. cit., p. 65.

88 P. Chaunu, Histoire science sociale : la durée, l'espace et l'homme à l'époque moderne, Paris: Societe d'edition d'enseignement superieur, 1974, p. 325.

89 J. Le Goff (dir.), La Nouvelle Histoire, Paris, Complexe, 2006., p. 508.

90 F. Furet, op. cit., p. 65.

91 П. Рикёр, указ. соч., с. 125.

կարող է ներառվել շարքի մեջ»⁹²: Ընդ որում՝ պատահականությունները հնարավորինս բացառվում են շարային պատմության տիրույթում: Դա ապահովելու համար «շարային» պատմության կողմնակիցները անհրաժեշտ են համարում վիճակագրական մեթոդների լայն կիրառումը: Ընդ որում՝ այն պետք է հիմնված լինի հավաստի թվերի և տևական ժամանակագրական հատվածների համադրվող տվյալների վրա⁹³: Այսու՝ պատահարների կոնկրետ համընկնումների վերհանումով առարկան ձեռք է բերում իր սահքը (envol), գոյություն է ունենում ինքն իր մեջ, վերարտադրվում իրականության այլ չափույթների մեջ: Հետազոտության առարկան արդեն ոչ թե կոնկրետ հասարակությունն է, այլ վերացական մոդելներն ու կառույցները՝ միասնականացված, համահարթեցված⁹⁴: Խորքային առումով համակցությունը համընկնում էր բրոդելյան ժամանակի կարճ տևողությանը, իսկ կառույցը՝ երկար տևողությանը, բայց արդեն «շարային պատմության» հեռանկարում:

Այսու՝ պատմագետի խնդիրն է ժամանակի «կարճ տևողության» համապատկերում եզակի փաստերի շարայնացմամբ հետազոտությունը դուրս բերել սոցիալական ժամանակի հաջորդ՝ քաղաքակրթական համակեցության հարթակ: Իսկ ապա՝ լոկալ պատմության հետ միմյանց շաղկապված բոլոր անհերքելի փաստերի շարանը ներմուծել «երկար տևողության», այն է՝ համընդգրկուն պատմության համապատկեր. «Շարային պատմությունը ի մի է բերում ողջ քանակային պատմությունը, բայց այն դրանց գերազանցում է, այն գրեթե, ըստ էության, վաղվա պատմությունն է, որն ուղևորվել է երրորդ մակարդակը նվաճելու՝ քաղաքակրթության համակարգի սահմանին վարանելով (tâtonnant)»⁹⁵: Համանման հետազոտական ընթացքը, սակայն, հետազոտողին կարող էր խճճել իմացաբանական պահանջների հորձանուտում՝ «հանգեցնելով հակադիր ուղղությունների»⁹⁶: Այս առումով Ֆ. Ֆյուրեն, ընդհանրացնելով քանակային պատմության տեսությունն ու դրա հետևանքները, գրում է. «Այն ատոմականացում է պատմական իրականությունը այնքան մեկուսի բեկորների, որ դրանով վիճարկում է պատմության՝ գլոբալ ըմբռնելու դասական հավակնությունները: Արդ, գուցե պետք է հրաժարվել՝ դրանցից: Իմ պատասխանը հետևյալն է. այդ պահանջները հարկավոր է, հաշվի առնելով հնարավոր առաջընթացը, պահեստավորել իբրև երկարաժամկետ նպատակ, բայց ոչ [իբրև] հետազոտության նախադրյալ, եթե միայն մենք չենք ուզում կրկին ու կրկին վախճանաբանական սոփեստությունների գոհ դառնալ... Այդ «համակարգերի համակարգերի» ընդգրկումը վերլուծությունը, հավանաբար, իմ հնարավորություններից դուրս է»⁹⁷: Բանն այն է, որ համընդգրկուն պատմությունը կազմակերպվում էր համաձայն մի հիմնախնդրի, որի իրականացման արդյունքում իրադարձությունների, եղելությունների փաստական շատ կողմեր անտեսվում կամ դուրս էին թողնվում: Այնինչ՝ դուրս թողնված նույն փաստական հենքը կարող էր կիրառություն գտնել պատմագիտության այլ հեռանկարում: Ավելի ընդլայն տիրույթում և ավելի նեղ տիրույթում պատմագիտական հե-

92 Там же.

93 Стé Ю. Н. Афанасьев, Историзм против эклектики, с. 189.

94 Стé Ю. Н. Афанасьев, Эволюция теоретических основ школы «Анналов» // Вопросы истории, М., 9 (1981), с. 89.

95 P. Chaunu, Les dépassements de l'histoire quantitative, p. 666.

96 Ж. Ревель, История и социальные науки во Франции. На эволюции школы «Анналов», «Новая и новейшая история», 6, (1998), с. 75.

97 Մեջբերումն ըստ՝ Ж. Ревель, указ.соч., с. 75.

ռանկարները կարող էին տարբերվել ըստ անհրաժեշտության: Եվ, ըստ Պ. Շոն-յուլի, միայն տվյալների շարային կառուցումը կարող է թույլ տալ հիմնախնդրի նորովի վերածնակերպումը, որի արդյունքում հնարավոր կլինի մասամբ լուծել ի հայտ եկած երկրնտրանքը, որը հնարավոր չէր մինչ նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Թվում է, թե շարային պատմության նման մեկնակերպը համընկնում է բրոդելյան պատմահայեցողությանը: Սակայն «շարային» և «համընդգրկուն» պատմության հասկացությունները, առանձին վերցված, արտահայտում են պատմական հետազոտության բևեռայնությունը, հատկապես երբ խնդիր է առաջանում. արդյո՞ք իրադարձայինի և պատմականի հաղթահարումը հանգեցնելու է կառույցի կողմից համակցության յուրացմանը, թե՞ երկար տևողությունն է տարբալուծվելու «անշարժ պատմության» մեջ: Հօգուտ երկար տևողության՝ Ֆ. Բրոդելի կողմից մերժվում էր առաջինը, քանի որ «այդ օգտակար պատմությունը չի փոխարկվում անցյալի ընդգրկուն-կենդանի պատկերի, որի մասին երագել են»⁹⁸: Մյուս կողմից՝ «շարային պատմությունը» ևս, մեղացնելով հետազոտական տիրույթը, փաստերի տրամաբանական շղթայից բացառում էր բազմաթիվ օղակներ, որոնք անմիջականորեն կապակցված էին գլխավոր, առանցքային իրադարձություններին: Ավելին՝ պատմագետը, ձգտելով շարային պատմության օգնությամբ ստեղծել համընդգրկուն և համաշխարհային պատմության հետազոտության նոր մեթոդ, չի բացատրում, թե ինչպե՞ս կարելի է ընտրված փաստերի շարանը հանգեցնել համընդգրկուն պատմության: Արդյունքում՝ նույն այն բացթողումը, որը քննադատվում էր «համընդգրկուն պատմության» դեպքում: Հատկապես, երբ «մարդն այստեղ բացակայում է կամ, լավագույն դեպքում, ներկա է հազվադեպ և ապարդյուն»⁹⁹:

Միով բանիվ՝ «քանակային» կամ «շարային» պատմությունը Ֆ. Բրոդելի «համընդգրկուն» պատմության հղացքի հակադրությունն է: Բայց ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է նկատել, որ նրա ինչ-ինչ տարրեր առկա էին անգամ հիմնադիր ուսուցիչների աշխատություններում: Խոսքը տեղական (լոկալ) պատմություններից համաշխարհային (գլոբալ) պատմությանն անցնելու ճիգերի ու մեթոդների մասին է¹⁰⁰: Նրանք երբեմն խոսում էին «պատմության համընդգրկուն օրենքի և սկզբունքի» մասին: Այս համապատկերում՝ թեպետ պատմության նկատմամբ «քանակային» կամ «շարային» և «համընդգրկուն» մոտեցումները ելակետում հակամարտության երանգներ ունեն, իրականում, սակայն, այդ երկու ընդհանուր մոտեցումների միջև հարաբերությունները «թշնամական չեն, քանի որ պատմագետը կարող է շարժվել մեկից մյուսին՝ ֆունկցիոնալիստական և շարային պատմությունների օժանդակության հենքի վրա յուրաքանչյուր քայլափոխի շտկելով համընդգրկուն պատմության սխալները և ֆունկցիոնալիստական ու շարային պատմությունների սխալները՝ համընդգրկուն պատմության վերջին արդյունքների հենքի վրա»¹⁰¹: Այսու՝ «շարային պատմությունը» «համընդգրկուն պատմության» անսպառության հաստատագրումն է պատմության շարայնաց-

98 F. Braudel, Pour une histoire sérielle: Séville et l'Atlantique (1504-1650), Annales. Économies, Sociétés, Civilisations, 3 (1963), p. 545.

99 Ibidem.

100 Տե՛ս Ա. Ստեփանյան, Պատմությունն իբրև տեքստ (Մեկնություն և գրության հնարավորություն), Պատմություն և կրթություն, Եր., 1-2, (2005), էջ 19:

101 T. Stoianovich, French historical method: the Annales paradigm, London: Cornell U. P., 1976, p. 203.

ման ճանապարհով:

Ամփոփենք: Համընդգրկուն պատմության և շարային պատմության մեթոդները դրսևորվում են մեկ միասնականության մեջ: Ընդ որում՝ այդ միասնականությունը բխում է ոչ թե նրանց բնույթից, այլ հիմնախնդիրների փոխհամաձայնեցումից: Եվ պատմագիտական այս երկու մեթոդները Աննալների դպրոցի թերևս ամենահաստատուն միտումներն են: Իսկ դրանց թվացյալ հակասությունները հաղթահարվում են հետագա աննալականների հետազոտություններում: Դա պայմանավորված էր նրանով, որ շարային պատմության համապատկերում մարդկային կյանքի արդիական ձևերն անկարելի էր ըմբռնել կամ մեկնաբանել այլ կերպ, քան դրանք հանգեցնելով համընդգրկուն պատմությանը և հակառակը: Մի բան, որին հանգել էր և Ֆ. Բրոդելը՝ «իր իսկ ստեղծած համակարգի հաղթահարման»¹⁰² ճանապարհին, որին ընթացք տվեցին Երրորդ սերնդի աննալականները: Այսպիսով՝ աննալականների համար առաջնայինը դառնում է պատմական գործընթացի ռիթմային բազմազանությունը, որի ծիրում բացառվում է «եզակի գործոնի վրա» կառուցված պատմությունը¹⁰³:

Summary

METAMORPHOSIS OF THE ANNALES SCHOOL: THE NEW HISTORY

Part I. The Post-Structural Paradigm and Quantitative or Serial Concepts

Smbat Kh. Hovhannisyan

The paper deals with the problems of the so-called third phase of the Annales School, which met the serious challenge of working out new paradigms and concepts of studying history in the 1940-50s. It questioned the concept of Total history from the point of view of post-structural criticism. And the main actor of that was M. Foucault who elaborated a new historical discourse.

The other results of the criticism were the Quantitative and Serial concepts. They contained contradictions with the holistic method of historical research. But their consent with the latter was obvious as well since only the combination of various methods is able to uncover more profound levels of the past, present and future. In this light, the necessity of viewing history from many sides comes to the fore.

102 Ա. Ստեփանյան, Ե. Մարգարյան, Ժամանակի կառույցը Ֆ.Բրոդելի պատմահայեցողության ճիրում, Պատմություն և կրթություն, Եր., 1-2, (2005), էջ 40:

103 Տե՛ս L'histoire et ses méthodes. Recherche, conservation et critique des témoignages. Sous la direction de Charles Samaran de l'Institut (Encyclopédie de la Pleiade), Paris, 1961, p. 65; Ինչպես նաև՝ F. Braudel, Positions de l'Histoire en 1950, // F. Braudel, Ecrits sur l'Histoire, Paris, Flammarion, 1969, pp. 20-21.